

## ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ո՛րքան դեռ ջանել է Գերմանիան գաղութային քաղաքականութեան ասպարէզում—բայց որքան դավինինք է արդէն վաստակել: Դեռ երէկ էր, որ նա ազատուեց գոյութեան կռուի ծանր մտահոգութիւնց և կազմակերպուեց իբրև ուրոյն ազգ և քաղաքական մարմին: Այնուհետև դեռ բաւական ժամանակ Գերմանիան, Բիսմարկի ջնորհիւ, հեռու էր պահուում աշխարհակալական տենդենցիաներից. և միմիայն երբ տարիների խելացի և զգուշաւոր քաղաքականութեամբ ամրապնդուեց ներսում, այն ժամանակ նա ևս որոշեց մղել իր յատուկ գաղութային քաղաքականութիւնը, որը Վիլհելմ կայսրի տերմինօլօգիայի մէջ նոյնանում է համաշխարհային քաղաքականութեան: Եւ ահա մի շարք բախտաւոր նուաճումներից յետոյ Աֆրիկայում ու Ասիայում՝ Գերմանիան հանդէս է գալիս այսօր, որպէս պատկառելի մի գաղութային պետութիւն. նրա հմայքն աճում է օրէցօր հեռու և մօտիկ արեւելքում. նրա ձայնը բարձր և ազդու հնչւում է համաշխարհային մրցման կրկէսում. նա գրեթէ հզօրագոյն է եւրոպական ցամաքի վրայ, նա ուղում է դառնալ հզօրագոյնը նաև ովկիանի վրայ:

Այդ սրարշաւ ու անակնկալ յառաջխաղացութիւնն է, որ զարմանք և նախանձ է չարժում ամբողջ Եւրոպայում և որ դողացնող անհանգստութիւն է պատճառում մասնաւորապէս Անգլիայի քաղաքագէտներին:

Գերմանական կայսրը անձնաւորումն է համաշխարհային քաղաքականութեան այդ տենչանքների: Այնքան սիրում է նա հռչակել մեծագոյն Գերմանիայի (das grössere Deutschland) և ուժեղ նաւատորմի հրաշալիքները. այնքան սիրում է նա հանդիսաւոր, փքուն ճառերի մէջ շեշտել, որ «Գերմանիայի ապագան ջրերի վրայ է... Սխալ կը լինէր որակել նրան «արկածախնդիր» կամ մէղալոման (մեծամոլ) տծականներով, ինչպէս անում են ոմանք: Վիլհելմ II իր մեծաշուք ճառերի ու արկածալի



համապարհորդութիւնների մէջ հաւատարիմ թարգման է հանդիսանում գերման-բուրժուական շահերի, այն պաղ, անսիրտ ռէպրէզանտ քաղաքականութեան, որի խարխալը դրել էր Բիսմարկ:

Ռէպրէզանտ քաղաքականութիւն... Բայց դա համատարած մի երևոյթ է այսօր... Սակայն Գերմանիան որոշ տեսակէտից իրաւ որ կազմում է մի տխուր բացառութիւն: Չը կայ ժամանակակից մեծ պետութիւնների շարքում և ոչ մէկը, որ այնքան քիչ բան արած լինի ժողովուրդների ոէրը գրաւելու համար, որքան Գերմանիան: Երբէք նա չի փորձել լինել փոքր ինչ վեհանձն, նպաստել այս կամ այն ստրուկ ժողովրդի ազատագրութեան: Համարեա ամեն տեղ նա եղել է բռնաւորի, հարստահարողի կողմը:

Քննենք Weltpolitik-ի զրդիչ գործօնները և անգլո-գերմանական մրցման էական պատճառները:

Գերմանիան պէսf ունի ծաւալուելու, դրաի աշխարհներ նուաճելու. դա նրա համար հրամայական մի պահանջ է: Մի 10—15 տարի արանից առաջ նա կարող էր մնալ կղզիացած իր սահմաններում,—այժմ արդիւնաբերութեան արագաճալլ զարգացումը հարկադրում է նրան նորանոր շուկաներ գրաւել՝ արտահանելու գերմանական ապրանքներն ու կապիտալները:

Տնտեսական առաջադիմութիւնը կատարուեց Գերմանիայում անսովոր թռիչքներով: Կապիտալիզմը, խոշոր մեքենայական արդիւնագործութիւնը ոչ մի ուրիշ երկրում չէր արտաբերել այնպիսի հարստութիւններ այնքան, համեմատաբար, կարճ ժամանակամիջոցում: Կանգ առնենք այդ հանգամանքի վրայ. նրան է պարտական Գերմանիան իր այսօրուան մեծութեամբ:

1870-ի յաղթական պատերազմից յետոյ էր, որ Գերմանիայում սկսուեց ինդուստրիական զարգացման փայլուն շրջանը: Եւ արդէն 80-ական թուերից դանդաղներ են լուում գերմանական վտանգի մասին Ֆրանսիայում ու Ռուսաստանում: Իսկ 90-ական թուականներին այդ վտանգը սկսում է ալէկոծել և Մեծ-Բրիտանիան... Մին-միւսի ետեւից այդտեղ լսյա են տեսնում գրուածքներ, որոնք գերմանական արդիւնաբերութեան հրաշքները արձանագրելով, դամբանական են կարդում Մեծ-Բրիտանիայի «ինդուստրիական գերազանցութեան»: «Մինչև այժմ այդ գերազանցութիւնը հանրածախ մի աքսիոմ էր, շուտով նա կը լինի մի առասպել»—այսպէս էր գրում 1897-ին էդուին Ուիլեամ իր «Madi in Germany» փոքրիկ աշխատութեան մէջ, որը մի ճշմարիտ ահակոչնակ էր:

Այն օրից գերմանական վտանգը դարձաւ անսպառ նիւթ



անգլիական լրագրութեան համար: Հրապարակաստութեան աւելի սանգլինիկ ներկայացուցիչները պատերազմ էին քարոզում Գերմանիայի դէմ, վստահ լինելով բրիտանական նաւատորմի գերազանցութեան վրայ...

Յաւ էր պատճառում անգլիացիներին տեսնել, թէ ինչպէս դերմանական ապրանքները յարաճուն քանակութեամբ հեղեղում են Մեծ-Բրիտանիայի ներքին շուկաները և հետզհետէ դուրս են մղում այնտեղից ազգային «հզօր ու բեղմնաւոր» ինդուստրիայի արդիւնքները:

Արդինագործութեան բոլոր ճիւղերը զրեթէ յանկարծակի սկսեցին ծաղկել Գերմանիայի մէջ, այնտեղ՝ ուր դարերի ընթացքում հազարաւոր խոչընդոտներ խափանել էին տնտեսական կեանքի նօրմալ զարգացումը 1870-ից սկսած միացեալ Գերմանիան ծածկուեց երկաթուղիների և ամեն տեսակ գործարանների մի կատարեալ ցանցով: Ինդուստրիական այդ հսկայ թշուրջը կազմում է համաշխարհային տնտեսական էվոլյուցիայի ամենացայտուն գծերից մինը:

Արդինաբերող աշխատանքի հետ միասին քարդաւանց ու անսպասելի չափեր առաւ գերմանական առեւտուրը: Մօտ 20 տարուայ ընթացքում արտաքին առևտուրն աճեց ամբողջ 60 տոկոսով: Ովիլհանսային նաւարկութիւնը առաջին տեղն է բռնում այդտեղ: Միմիայն ծովային առևտուրը կազմում է բովանդակ արտաքին առևտրի 660/0-ը <sup>1)</sup> նաւարկութեան հրամայական պահանջը մեծ զարկ տուեց նաւային ինդուստրիային և այսօր Գերմանիան իրաւամբ հպարտանում է, որ իր նաւահանգիստները մտնող նաւերի աւելի քան կէսը իր սեփականներն են: Վիլհելմ կայսրի հայրենակիցներին հանգիստ չի տալիս անգլիացիների սիրած մաքսիմը. «Բրիտանիան կառավարում է ալիքները, իսկ ով որ ալիքներն է կառավարում, նա ղեկավարում է և աշխարհի ճակատագիրը»: Սիրում են գերմանացիք կրկնել իրանց նշանաւոր տնտեսագէտ Լիստի խօսքերը. «Ծովը աշխարհի մեծ շնչերակն է և ազգերի մրցարանը. ազգը առանց նաւորդների—միննոյն է թէ թռչունը առանց թևերի, ձուկը առանց լողակների, առիւծը առանց ատամների»:

Այդ չարատանջ մաքսիմներն են, որ գիշեր ու ցերեկ հալածում են Վիլհելմ կայսրին և նրանք են, որ պարբերաբար հրապարակ են նետում նաւատորմի հսկայական նախագիծներ:

Չը կայ մի կէտ երկրագնդի վրայ, ուր հաստատուում չը

<sup>1)</sup> G. Bloandel, L'Essor industriel et commercial du peuple allemand.



լինի այսօր գերմանացի վաճառականը. ամեն տեղ թափանցում ու բեղմնավորում է գերմանական կապիտալը, ամեն տեղ և՛ բնան է գալիս ցեղի յամառ տոկունութիւնը:

Համաշխարհային առևտուրը ընդլայնելու միտումով էր, որ Գերմանիան տնդային եռանդով սկսեց մղել զազուլային քաղաքականութիւն. կային, անշուշտ, ուրիշ մղումներ ևս: Ուրբան հրապուրիչ է ինքն ըստ ինքեան տիեզերածաւալ գաղութային մի կայսրութեան հեռապատկերը... Այդտեղ է հէնց բրիտանական մեծութեան ու Վիկտորիան մեկուսացման գաղտնիքը: Այդ էին երազում և լսեցողոյն Գերմանիայի շամպիօնները: Յիշեցէք այն գոռ ու պաթեթիկ ճառերը, որ Վիլհելմ II և իր եղբայր Հանրի արտասանեցին 1897-ին Կիլում՝ գերմանական նաւատորմը Կիաուկաու շրկելու առթիւ Դրանք ներքոյներ էին ուղղուած անդրովկիանոսեան քաղաքականութեան, որը դառնում էր մի տեսակ դօզմ գերմանական կայսրութեան համար: Կիաուկաու ձեռք բերելով, Գերմանիան ամուր հաստատուեց Մայրագոյն Արեւելքում և Մեծ-Բրիտանիան այնտեղ ևս զգաց շուտով գերմանական մրցակցութեան վտանգը: Կարելի է այժմից ասել, որ Գերմանիան այդ կողմնորում հարուած տուեց անգլիական դիկտատուրին: Զուր չէր ասում ազատամիտ կուսակցութեան պարագլուխ Օյդէն Ռիխտէր, որ Կիաուկաու (Չինաստան) ծովախօրի նուաճումը աւելի շահաւէտ է, քան հոգերի գրաւումը Աֆրիկայում:

Խիստ զգալի են գերմանական առևտրի աջողութիւնները նաև ցամաքային աշխարհում: Եւրոպայի հիւսիսային երկրները հեղեղուած են գերմանական ապրանքներով: Ռուսաստանում գերմանացիների ներմուծումը հասնում էր 1893-ին 101 միլիօն ռուբլու, իսկ 1895-ին նա հասնում էր 175 միլիօնի: Մեքենաների շուկան այդտեղ ամբողջապէս գերմանացիների ձեռքումն է, որոնք կամաց-կամաց դուրս են մղում անգլիացիներին: Շվեդիային գերմանացիք վաճառում են ամեն տարի մօտ 120 միլիօնի ապրանք, այն ինչ ֆրանսիացիք՝ ընդամենը 5 միլիօնի: Նորվեգիային ֆրանսիացիք վաճառում են տարեկան  $3\frac{1}{2}$  միլիօնի, այն ինչ Գերմանիայի ներմուծումը հասնում է 60 միլիօնի: Նոյնպիսի հիւրընկալ շուկաներ են գերմանական ապրանքների համար՝ Դանիան, Հոլանդիան, Բելգիան: Անգլիայում գերմանական ներմուծումը աւելացել է վերջին 20 տարում ամբողջ 30 տոկոսով<sup>1)</sup>:

Միևնոյն աջողութիւններն ենք տեսնում նաև կենտրոնա-

\*) G. Blondel, L'Essor industriel...



կան ու հարաւային Եւրոպայում. Շվեյցարիայի, Աւստրիայի, Ունգարիայի, Սլոնիայի, Իտալիայի շուկաները միշտ աւելի և աւելի զրաւում են գերմանական ապրանքներով։ Ամեն կողմից լուում է միևնոյն ձայնը. գերմանացին հմուտ է ապրանքների արդիւնագործութեան մէջ և նա գիտէ յարմարուել գնողների պահանջներին։

Յունաստանում, Ռումանիայում, Սերբիայում, Բոլգարիայում՝ Գերմանիան առաջնակարգ տեղն ունի այսօր ներմուծող պետութիւնների մէջ. շատ տեղերում գերմաներէնը դառնում է արդէն առևտրական գործածական լեզու։

Տաճկաստանը հակումն ունի ամբողջապէս նետուելու գերմանական ազդեցութեան շրջանը։ Գերմանիայի բռնած դիրքը յոյն-տաճկական պատերազմի ընթացքում, յայտնի է որ շատ նպաստեց այդ հանգամանքին։ Վիլհելմ կայսրի Realpolitik-ի ամենամեծ նուաճումն է այդտեղ Բաղդադի երկաթուղային հըսկայ նախագիծը, որ վերջերս ստորագրուեց Ելզըզում։ Գերմանական կապիտալիզմի յարաճուն բարիքները կը տարածուեն այսուհետև Եփրատի հովիտներում և Տաւրոսի բարձունքների վրայ...

Այո՛, նախնածելի առաջադիմութիւն... Մի ազգ, որ դեռ երէկ միայն ստացաւ ազգայնութեան իրաւունքներ, մի երկիր, որ 35 տարի սրանից առաջ ներկայացնում էր աղքատ ու անշատ նահանգների մի ողորմելի դանդուած—այսօր նա վտանգաւոր մրցակից է հանդիսանում ամենահզօր, տիեզերական կայսրութեան, որի զլուխը Լոնդոնում է, իսկ ոտները ամեն տեղ, այսօր նա իբրև մարմնացած էներգիա՝ գրոհ է տալիս դէպի աշխարհի բոլոր անկիւնները, և իրան դաւանանք ընդունելով՝ շահի՝ անարգ փիլիսոփայութիւնը, ծաղրելով՝ ռմբակասիրութեան, ալտրոնիզմի բանդագուշանքները, գրկախառնուելով՝ ամենազաղրելի սփռագործների հետ՝ հպարտ և անայլայլ ճշգրտում է դէպի համաշխարհային տիրապետութիւն։

Բացառիկ այդ առաջադիմութիւնը ունի անշուշտ և իր բացառիկ պատճառները։ Դրանց մէջ առաջինը և կարևորագոյնը՝ ցեղական օնպետաւեցն է, որը ազգակից լինելով անգլո-սաքսոնական ոգուն, ունի այնուամենայնիւ և իր առանձնայատկութիւնները։ Անգլո-սաքսոնների պէս գերմանացիք ևս գաղթող տարածուող են։ Եւ ուր որ հաստատուում են նրանք՝ կեանք ու եռանդ են տարածում իրանց շուրջը, չնչին դրամազլուխներով կարողանում են շահագործել բնական հարստութիւնները։



րբ: Յամառ աշխատաւորներ են նրանք, չափազանց դիմացկուն, կորովի և համբերող. վաճառական ու գաղթարար ժողովրդի էական յատկանիշներն են դրանք:

Բացի դրանից, գերմանական ժողովրդի մէջ աչքի է ընկնում բաւականաչափ զարգացած՝ ընկերակցութեան ոգին, որի շնորհիւ արդիւնագործութեան բոլոր ճիւղերում կազմակերպւում են վիթխարի սինդիկատներ երկրի մէջ և երկրից դուրս— ուրեմն դարձեալ մի խոշոր գրաւական Գերմանիայի տնտեսական առաջադիմութեան: Չը կայ այսօրուան Գերմանիայում ոչ մի շատ թէ քիչ նշանաւոր կենտրոն, ուր հիմնուած չը լինի որեւէ ընկերութիւն ազգային արդիւնագործութիւնը խրախուսելու համար:

Ընկերակցութեան ոգին գերմանական կապիտալիստներին մէջ անհամեմատ աւելի է զարգացած, քան որեւէ ուրիշ երկրում, քան նոյն իսկ Անգլիայում, ուր գերակշռում է ինդիվիդուալիզմը, անհատական ոգին: Դրա պատճառներից մէկն է, անշուշտ, այն հանգամանքը՝ որ գերմանական աշխարհում պրօլետարիատի լայն մասսաները կազմակերպւում են այսօր անաւոր դաշնակցութիւններ՝ արմատական տենդենցիաներով,—մի բան, որ հարկադրում է նրանց թշնամի, կապիտալիստ տարրերին ևս ձեռք ձեռքի տալ, ընկերակցել:

Յեղական փեմպերամէնտի պակասը լրացնում են դասօթարակութիւնն ու կրթութիւնը, որոնք ներշնչւած են գերազանցապէս գործնական ոգով: Գերմանացին պէտք ունի միշտ զեկաւալալի, նա ի բնէ ծանրաշարժ է, վերին աստիճանի հնազանդուող, դիսցիպլինի ենթարկուող՝ Նա չունի անգլիացու աշխարհադասան յատկութիւնները, նրա հզօր նախաձեռնող ոգին, նրա ըմբոստ անհատականութիւնը: Բայց նա զպրօցի մէջ իւրացնում է չարքաշ կեանքի բոլոր կանոնները, պատրաստուում է կենսական պայքարի համար, վարժուում է յամառ ու յարատեւ աշխատանքի: Նա ունի մի ճնշող առաւելութիւն անգլիացու և ֆրանսիացու դիմաց—նա ուսումնասիրում է ամենայն խնամքով օտար երկրների լեզուները, աշխարհագրութիւնը, նիստ ու կացը, քաղաքական-հասարակական հաստատութիւնները և ևայլն. նա ըստ ամենայնի պատրաստուած մի ճանապարհորդաւորական—կոմերիւյաթեօր է:

Վաճառականական կրթութեան մէջ ևս մենք տեսնում ենք միևնոյն մեթօդը, որը գերմանական մօքի պարծանքն է կազմում և որը քայլում է նրա զինուորական արուեստի, նրա գիտութեան ու փիլիսոփայութեան մէջ: Այսօր Գերմանիան ունի 25 բարձրագոյն աւետարական դպրոցներ, չը հաշուելով բազմաթիւ



ստորին և միջնակարգ առևտրական դպրանոցները, Մադղուս է ամբողջ Գերմանիայում արհեստագիտական ուսումը ևս, որը թէ մեծապէս նպաստում է ազգային ինդուստրիային և թէ մեղմում է դասակարգային անտագոնիզմը, պահպանելով մանր արդիւնադործողների դասակարգը:

Եւ այդպէս, շնորհիւ իր ցեղական տեմպերամէնտին և բուն գործնական դաստիարակութեան, շնորհիւ իր առանձնա-յատուկ գիտական մեթոդին և պրոֆէսիօնալ դպրոցների անսովոր զարգացման, շնորհիւ վերջապէս կառավարութեան անընդ-հատ ու խրախուսիչ միջամտութիւններին,—գերմանական ազգը այնպէս սոսաջադիմել է տնտեսական աշխարհում, որ նա այժմ ոչ միայն գերազանցում է լատին ցեղերից, այլ և սպառնում է արդէն Մեծ-Բրիտանիային...

Վիրելմ II և իր կառավարութիւնը, չը նայած Ռայստագի ընդդիմադիր կուսակցութեան, շարունակում են դեռ փայփայել զօրքի և նաւատորմի հոյակապ ծրագիրները:

Հազիւ երկու տարի է, ինչ նաւատորմի մի հսկայ նախագիծ, որ ներկայացրուել էր Ռայստագի քննութեան, անցաւ մի կերպ, նշանաւոր կրճատումներով,—և ահա արդէն մի ուրիշ նախագիծ, որ մինչև օրս գաղտնի էր պահւում կառավարչական շրջաններում, բայց որ «Vorwärts»-ը իր սովորական հոտառութեամբ երևան հանեց և մատնեց հասարակական ուշադրութեան: Թէ որքան աջողութիւն կ'ունենայ նաւային մեծութեան այդ նոր ծրագիրը—ապագան ցոյց կը տալ: Օպագոյիցիան այժմից իսկ փոթորիկ բարձրացրեց և իրաւամբ շեշտեց այն միտքը՝ որ անհնարին է մի պետութեան համար—որքան էլ լինի նա հարուստ ու բարգաւաճ—պահել միաժամանակ մեծ ցամաքային զօրք և մեծ նաւատորմ, որոնք ծանրանալով մաս-սանների վրայ՝ դառնում են վտանգաւոր՝ ներքին, սօցիալական խաղաղութեան համար:

Բայց Վիրելմ կայսրին ոչինչ չի կանգնեցնում... Պէտք է coûte quo coûte գերազանցել կամ գէթ հաւասարուել բրիտանական ծովային զօրութեան: Բանկէտների, ազգային կամ դի-նաստիական տօների ու հանդիսաւոր ընդունելութիւնների միջոցին նա բոցաշունչ ֆիլիպպիկներով յորդորներ է ուղղում շարունակ երկրի բոլոր դասակարգերին՝ ներշնչուել հայրենասիրութեան՝ այն մեծ զաղափարով, որով տողորուած է Հօհենցօլլերնների արքայատոհմը սկսած եզինուոր-թագաւորի՝ Վիր-հելմ I-ի օրերից:

Եւ կայսերական այդ մեծագոյորդ ու սպառնալից ճառերը, այդ՝ ըստ երևոյթին անհատական, բայց իրօք ամբողջ բուր-



ժուազական Գերմանիայի սրտի խորքերից բղխող իղձերը ոչ մի տեղ չեն ունենում այնքան մեծ չառաչում, ոչ մի երկրում այն աստիճան չեն յուզում կրքերը, ինչպէս Անգլիայում:

Անգլո-գերմանական անտագոնիզմը կառավարութիւններով ու իշխող դասակարգերով չի սահմանափակւում: Նա օրըսօրէ բռնում է ժողովրդային բոլոր խաւերը երկու երկրներում: Մի շարք ամիջնադէպեր, որոնք առաջ եկան վերջին տարիների ընթացքում այդ երկու պետութիւնների միջև, ամենեւին պատահական երեւոյթներ չեն: Երբ 1896-ին Ջեմսոնի արշաւանքի առիթով Վիլհելմ II համալրական հեռագիր էր ուղղում Տրանսվալի նախագահ Կրիլգէրին, կամ երբ սրանից քիչ առաջ Ջեմբերլէն միջխտրական ամբիոնից անուղղակի պախարակում էր գերմանական զօրքի վայրագութիւնները 1870-ի պատերազմի միջոցին, — սոսկ քամահանոյք չէր այդ երկու պետութիւնների ներկայացուցիչների կողմից, այլ ազատ ու անկեղծ արտայայտութիւն այն կատաղի հակամարտութեան, որը սկիզբ առնելով տնտեսական մրցման աղբիւրից, ճակատագրապէս անդրադառնում է երկու երկրների քաղաքական և օդիալական կացութեան վրայ:

Ձինգոյիզմը իր շահամու ու գիշատիչ ինստինկտներով այնքան տարածուել, այն աստիճան վարակել է ամբողջ բրիտանական աշխարհը, որ կարելի է պնդել Մաքս Շիպպէլի հետ՝ թէ այսօր իւրաքանչիւր մի անգլիացի իր ծոցի մէջ կրում է «Մովային աւազակին» (Jeder Engländer hat heute seinen Seeräuber im Busen):

Ռազմատէր իմպերիալիզմի կամ պանբրիտանիզմի տենդը բռնել է բոլոր կուսակցութիւններին: Երբեմն արմատական և նոյն իսկ ծայրայեղ ազատամիտ Ջեմբերլէնը, աստիճանաբար կերպարանափոխուելով, այսօր ոչ միայն ղեկավար է հանդիսանում պահպանողական հզօր կուսակցութեան, այլ և քաշում է իր ետեւից ամբողջ ազգը, նոյն իսկ բանուոր ընդհանրութեան մի նշանաւոր մասը, որը չօլինիզմի արեւցողութեան մէջ «God save the King» որոտալով, խրախուսում է շարունակ քստմնելի պատերազմը երկու թշուկ հանրապետութիւնների դէմ...

Ո՛ւր են Գլադստոնի ժամանակները... Ո՛ւր է ազատամիտ մեծ կուսակցութիւնը, որ երբեմն կուռ ու կազմ՝ առաջ էր տանում յաղթականօրէն խաղաղութեան ու մարդկութեան դրօշը: Այսօր նրա կարիկատուրը միայն գոյութիւն ունի: Իմպերիալիզմի համահարակը անդամալուծել է նրա ոյժերը: Նա բաժանուել է երեք կուսակցութիւնների, երեք թևերի: Նա ու-



նի իր աջակողմը, իր կենտրոնը և իր ձախ թևը, Աջակողմը իրապարագայում ունի լօրդ Բոզբէրի, որը համակրութիւն է յայտնում իմպերիալիզմի կամ նուաճողական քաղաքականութեանը, կենտրոնի ղեկավարն է Սէր Հանրի Կէմպել Բեննեթման, որը իրաւ է, երբեմն խիստ ոճով քննադատում է չեմբերլենական քաղաքականութիւնը, բայց և չի համարձակում վիրաւորել ջինգօ-իզմի և աշխարհակալութեան տենդով բռնուած բրիտանական ժողովրդի զգացմունքները, Մախակողմը բռնում է ազատամիտ կուսակցութեան մի ողորմելի փոքրամասնութիւն, որը իրան առաջնորդ ունենալով Ջոն Մօրլէին՝ սխտեմաբար ու անկեղծ նստումով դատաւիտում է ներկայ պատերազմի հեղինակներին, փաստաբանում է ազգերի անխախտելի իրաւունքները, պահանջում է Տրանսպալի անկախութիւնը և ազդարարում է վտանգաւոր հետևանքները չեմբերլենական ներկայ սխտեմը:

Այդպէս է դրութիւնը ժամանակակից Անգլիայում: Եւ այդ դրութիւնը երեկոսանից չէ, որ գոյութիւն ունի, նա չի սկսում Անգլո-բօյէրական պատերազմով, ինչպէս կարծում են ոմանք, նրա պատճառները աւելի հեռու են և աւելի խոր: Ինքը լօրդ Ռօզբերի խոստովանեց այդ. քիչ առաջ նա ասում էր հրապարակական մի ճառում, որ բրաժանումը ազատամիտ կուսակցութեան մէջ իր արմատներն ունի աւելի հին անցքերի հոսանքում, քան հարաւ-աֆրիկական պատերազմն է: Նոյնը պնդում է պ. Մակդոնալդ Contemporary Review-ի մէջ ղեկեղուած մի ուշադրաւ յօդուածում, «Իմպերիալիստական պրօբլեմը» խորագրով (Հոկտ. 1901):

Մինչև 80-ական թուականները—ասում է յօդուածագիրը, ազատամիտ կուսակցութեան գործունէութիւնը Անգլիայում կապուած էր գլխաւորապէս ներքին քաղաքականութեան հետ: Այս ասպարէզում է, որ նա մատուցել է երկրին հսկայական ծառայութիւններ՝ այդտեղ է, որ նա տարել է իր գլխաւոր յաղթութիւնները, կազմակերպել է իր սկզբունքներն ու պանծալի տրագիցիաները, Անգլիան ապահով էր արտաքին վտանգից, նա ամրապնդել էր համաշխարհային դիրքը և չունենալով խոշոր մրցակից՝ կենտրոնացրել էր իր ուշադրութիւնը գլխաւորապէս ներքին քաղաքականութեան վրայ, որի նշանաբանն էր՝ խաղաղութիւն, տնտեսութիւն և առաջադիմութիւն: Կուսակցութիւնների յարաբերութիւնը և միմիկտրութիւնների բախտը որոշուած էին բացառապէս ներքին քաղաքականութեան խնդիրներով:

Այդ դրութիւնը յեղաշրջուեց ֆրանկ-պրուսական պատերազմից յետոյ, երբ Սեդանի գոռոզ յաղթողը դարձաւ մի տե-



սակ իրաւարար՝ ամբողջ Եւրոպայի համար, երբ նա ծաւալեց իր ուժը ներքում և դրսում, երբ նա հանդիսացաւ ահարկու մրցակից Ուկրաինների միահեծան պետին։ Այդ ժամանակ էր ահա, որ արթնացաւ և ուժգին դռն տուեց ռազմատենչ իմպերիալիզմը, այդ ժամանակից էր, որ կազմալուծման սաղմը մտաւ անգլիական լիբերալիզմի մէջ և ազատամիտ կուսակցութեան մի կարևոր թեր կամաց-կամաց բաժանուելով՝ ի վերջոյ միացաւ տօրիններն՝ յանուն պանբրիտանիզմի կամ բրիտանական աշխարհածաւալ տիրապետութեան։

«Գերմանական վտանգը» այնքան ահաւոր է թւում և նրան դիմադրելու պահանջը այնքան ստիպողական՝ որ վերջին ժամանակներս անգլիական մամուլի մէջ մինչև իսկ լսում են ձայներ, օպտիմիստ մարգարէութիւններ անգլո-ռուսական մի համաձայնութեան մասին։ «National Review»-ը մի շարք յօդուածներ նուիրեց այդ խնդրին։ «Եթէ անգամ մի օր—ասում է այդ հանդէսը—բրիտանական նաւատորմը ջախջախուի ուկրաինի տիրապետութեան համար մղուելիք յուսահատ կռուի մէջ,—ուրիշ ազգերը և Ռուսաստանը մասնաւորապէս կը հասկանան, որ ոչինչ չա՛հ չունին՝ թոյլ տալով գերմանական արծուին դուրս մղել բրիտանական դրօշը ուկրաինի թագաւորութիւնից։...

Այդ հիմնական մտքի վրայ է կառուցանում National Review-ը անգլո-գերմանական մերձեցումի օրիզինալ ծրագիրը։ Նա ուրուագծում է այդ ծրագրի առանձին կէտերը, երկու պետութիւնների համաձայնութեան համար անհրաժեշտ փոխադարձ զիջումները Բալկաններում, Եգիպտոսում, հեռաւոր և մերձաւոր Արևելքում։ Բաւականանում ենք գաղափարը միայն յիշատակելով, առանց մտնելու մանրամասների մէջ, որոնք դուրս են ներկայ յօդուածի շրջանակներէց։

ՄԻՔ. ՅՈՎՀԱՆՆՍՅԱՆ